ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ

04 դեկտեմբերի 2025 թ. N 02-Լ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 02-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) ***որոշում է***.

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հանձնաժողովի նիստերի անցկացման աշխատակարգը սահմանելու մասին» N 02-Լ որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 1-ին կետը «նիստերի» բառից առաջ լրացնել «բանավոր կամ գրավոր» բառերով.

2) 5-րդ կետը «ժամի,» բառից հետո լրացնել «ձևաչափի,» բառով.

3) 8-րդ, 9-րդ և 47-րդ կետերը լրացնել «:» կետադրական նշանով.

4) 10-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ նոր խմբագրությամբ.

«10. Հանձնաժողովի բանավոր նիստերը հրավիրվում են աշխատանքային օրերին և ժամերին: Հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար: Հանձնաժողովի անդամը, այդ թվում՝ նախագահը՝ որպես անդամ, գործուղման դեպքում կարող է հեռավար մասնակցել անցկացվող նիստերին և քվեարկությանը: Բացառիկ դեպքերում, ելնելով հարցի հրատապությունից, նիստ կարող է հրավիրվել նաև ոչ աշխատանքային օրերին և ժամերին:».

5) Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1 կետով.

«10.1. Հարցի հրատապությունից ելնելով՝ Հանձնաժողովը կարող է հրավիրել գրավոր նիստեր՝ նախապես ապահովելով վարույթի կողմերի լսված լինելու իրավունքը: Դռնփակ նիստերը կարող են անցկացվել գրավոր նաև Հանձնաժողովի մասնագիտական ստորաբաժանման ղեկավարի առաջարկությամբ, երբ բացակայում է հարցի բանավոր քննարկման անհրաժեշտությունը: Հանձնաժողովի գրավոր նիստերի քվեարկությունն իրականացվում է էլեկտրոնային ընդհանուր փաստաթղթաշրջանառության համակարգի կամ Հանձնաժողովի անդամների աշխատանքային էլեկտրոնային փոստի միջոցով: Հանձնաժողովի անդամը, այդ թվում՝ նախագահը՝ որպես անդամ, գործուղման դեպքում կարող է մասնակցել անցկացվող գրավոր նիստերին և քվեարկությանը:».

6) Գլուխ 2-ի վերնագիրը «ՆԻՍՏԵՐԻ» բառից առաջ լրացնել «ԲԱՆԱՎՈՐ» բառով.

7) 13-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հանձնաժողովի անդամը գործուղման դեպքում կարող է հեռավար մասնակցել անցկացվող նիստերին և քվեարկությանը:».

8) 21-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ նոր խմբագրությամբ.

«21. Դռնփակ նիստն անցկացվում է Հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ, այդ թվում՝ բոլոր այն դեպքերում, երբ նիստում քննարկվում են հայտարարագրերի ստուգմանը, վերլուծությանը կամ օրենքով սահմանված կարգով բարեվարքության ուսումնասիրությանն առնչվող հարցեր:».

9) Գլուխ 3-ի վերնագիրը «ՆԻՍՏԵՐԻ» բառից առաջ լրացնել «ԲԱՆԱՎՈՐ» բառով.

10) Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ գլխով.

«ԳԼՈՒԽ 4
ԳՐԱՎՈՐ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

49. Հանձնաժողովի գրավոր նիստերի վրա տարածվում են սույն աշխատակարգի 2-րդ և 3-րդ գլուխներով նախատեսված կարգավորումները՝ սույն գլխով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ:

50. Հանձնաժողովի նախագահը՝ իր նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի առնվազն երկու անդամի պահանջով հանձնարարում է նիստը վարողի օգնականին կամ Հանձնաժողովի այլ աշխատակցի ապահովել Հանձնաժողովի գրավոր նիստի կազմակերպումը:

51. Սույն աշխատակարգի 50-րդ կետով նախատեսված աշխատակիցն էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի կամ աշխատանքային էլեկտրոնային փոստի միջոցով Հանձնաժողովի անդամներին և Հանձնաժողովի իրավասու ստորաբաժանման ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ներկայացնում նիստի օրակարգը, նյութերը, ինչպես նաև օրակարգում ներառված հարցերից յուրաքանչյուրի քվեարկության ժամկետը: Քվեարկության ժամկետը պետք է լինի ողջամիտ, սակայն ոչ պակաս, քան 1 աշխատանքային օրը:

52. Նիստի օրակարգում ներառված հարցի վերաբերյալ Հանձնաժողովի անդամներն իրենց դիրքորոշումը ներկայացնում են սույն աշխատակարգի 51-րդ կետով նախատեսված՝ Հանձնաժողովի աշխատակցի ներկայացրած ժամկետում՝ քվեարկելով կողմ կամ դեմ կամ միջնորդելով, որ հարցը քննարկվի բանավոր նիստում: Եթե Հանձնաժողովի անդամը սահմանված ժամկետում դիրքորոշում չի ներկայացնում, նա համարվում է քվեարկությանը չմասնակցած, և նրա ձայնը չի ներառվում կողմ և դեմ քվեարկությունների հաշվարկում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Recoverable Signature

X

Signed by: GALSTYAN MARIAM 5308890730 **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**